



**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

« 05 » *հոկտեմբեր* 2020թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 272-Ձ

**ԱՇՈՏ ՍԻՄՈՆԻ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի № 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի № 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետն ու Աշոտ Սիմոնի Տերտերյանի 2020 թվականի նոյեմբերի 3-ի դիմումը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) իրավաբանական վարչության գլխավոր իրավաբանի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.1-Մ2-2) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2020 թվականի նոյեմբերի 3-ին անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .

1. Աշոտ Սիմոնի Տերտերյանին նշանակել Կոմիտեի իրավաբանական վարչության գլխավոր իրավաբանի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.1-Մ2-2) պաշտոնում՝ 9 ամիս փորձաշրջանով:
2. Աշոտ Սիմոնի Տերտերյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի տեղակալ (ծածկագիր՝ 22-4-24.1-Ղ5-1) Միլենա Կարապետյանին:
3. Աշոտ Սիմոնի Տերտերյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 212 309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) դրամ՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

 Recoverable Signature

X 

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ

Signed by: ZALINYAN MIKAYEL 1310880573

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ